ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
24.01.2025թ. թիվ 3/11-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝
_____ Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ, նաև՝ Որակավորման հանձնաժողով) որակավորման քննությունները կազմակերպելու և դրանց արդյունքներն ամփոփելու նպատակով երկու տարի ժամկետով կազմավորված, ինն անդամից բաղկացած մարմին է:

«Փաստաբանության մասին» օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու տարի ժամկետով՝ ինն անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.

1) փաստաբանների պալատի խորհրդի ընտրած հինգ փաստաբան.

2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

3) Վճռաբեկ դատարանից մեկ դատավոր՝ Վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի լիազորությունները, նիստերի գումարման կարգը և Փաստաբանների պալատի կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Փաստաբանների պալատի խորհրդի կողմից ընդունված որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.03.2023թ. թիվ 8/11-Ա որոշմամբ երկու տարի ժամկետով կազմավորվել է փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողով:

2024 թվականին կազմակերպված որակավորման քննություններն անցկացվել են երկու փուլով՝ առաջին փուլի ընթացքում հավակնորդները կատարել են գրավոր առաջադրանք, իսկ երկրորդ փուլի ընթացքում պատասխանել են քննատոմսի և Որակավորման հանձնաժողովի անդամների հարցերին:

2024 թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցելու համար դիմում են ներկայացրել ընդհանուր 106 հավակնորդ, որից 101-ը ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրներ, իսկ 5 հավակնորդ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով որակավորման քննություններին մասնակցություն իրավունք ունեցող անձինք:

ՀՀ փաստաբանական ակադեմիան ավարտած ունկնդիրների (այսուհետ՝ Ունկնդիր) քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 22.05.2024 թվականին, որին մասնակցել է 69 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 23.05.2023 թվականին, որին մասնակցել է 37 հավակնորդ:

Ունկնդիրների քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլն անցկացվել է 19.06.2024 թվականին, որին մասնակցել է 58 հավակնորդ:

Ունկնդիրների քրեաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլն անցկացվել է 20.06.2024 թվականին, որին մասնակցել է 33 հավակնորդ:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի հիմքով որակավորման քննություններին մասնակցություն իրավունք ունեցող անձանց գրավոր փուլն անցկացվել է 30.05.2024 թվականին, որին մասնակցել է 5 դիմորդ:

2024թ թվականի գարնանը կազմակերպված որակավորման քննությունները ընդհանուր հանձնել է 82 հավակնորդ (53 քաղ./29 քր.), չի հանձնել 23 հավակնորդ (15 քաղ./ 8 քր.)

2024 թվականի գարնանը որակավորման քննություններին մասնակելու դիմում ներկայացրած հավակնորդներից 1-ը քննությանը չի ներկայացել:

2024թ. գարնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝		
82 (78%) *հավակնորդ հանձնել է*		*23 (22%)* *հավակնորդ չի հանձնել*

2024 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները անցկացվել են՝ երկու փուլով, որին մասնակցելու համար դիմում է ներկացրել 136 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 29.11.2024 թվականին, որին մասնակցել է 85 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների գրավոր փուլն անցկացվել է 30.11.2024 թվականին, որին մասնակցել է 49 հավակնորդ:

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլը անցկացվել է 14.11.2024 թվականին, որին մասնակցել է 75 հավակնորդ:

Քրեաիրավական ուղղվածության դիմորդների բանավոր փուլը անցկացվել է 15.11.2024 թվականին, որին մասնակցել է 46 հավակնորդ:

2024 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննությունները հանձնել է 110 հավակնորդ (66 քաղ./ 44 քր.), չի հանձնել 24 հավակնորդ (քաղ.19 / 5 քր.)

2024 թվականի աշնանը որակավորման քննություններին մասնակելու դիմում ներկայացրած հավակնորդներից 2-ը քննությանը չի ներկայացել:

2023թ. աշնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների ընդհանուր քանակը՝		
110 (82,09%) ***հավակնորդ հանձնել է***		***24 (17,9%)*** ***հավակնորդ չի հանձնել***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
քարտուղար՝ Լուսինե Սարգսյան